ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետափնյա, (093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014թվականի N 19-Ն

ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ-Ի «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ» ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի և 26-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 2015թ-ի «համայնքի ղեկավարի» աշխատավարձի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

1.Մ. Ազատյան	համայնքի ղեկավար	185000 դրամ
2.Աշխատակազմի քարտուղար	(թափուր)	148000 դրամ
3.Ա. Վարդանյան	առաջատար մասնագետ	147000 դրամ
4.Ա. Աղավելյան	առաջին կարգի մասնագետ	146000 դրամ
5.Ա. Գևորգյան	երկրորդ կարգի մասնագետ	85000 դրամ
6.Գ. Ադամյան	համակարգչային օպերատոր	80000 դրամ
7.Ծ. Օհանյան	գրադարանավար	66200 դրամ
8.Գ. Կիրակոսյան	հավաքարար	66200 դրամ

1. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՐՓԵՆԻԿ
2. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ
3. ԱԶԱՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ԳԱՐԻԿ
6. ԹԱՄԻՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԿՐՏԻՉ ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետափնյա, (093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014թվականի N 20-Ն

ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գետափնյա համայնքի 2015 թ – ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատ - ված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի , շինությունների / ներառյալ ՝ ոչ հիմնական / շինարարության / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝

հիմնական օբյեկտների համար

1 / Մինչև 300 քմ . ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական / ամառանոցային / տների , ինչպես նաև մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար - 7500 դրամ

2/ Սույն կետի << ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ՝ա/ 201 – ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -15000 դրամ

բ/ 501 -ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -25000 դրամ

գ/1001 – ից մինչև 3000 քմ . ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 35000 դրամ դ/3001-ից և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար ՝

3/ Մինչև 20 քմ . ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -1500դրամ

4/ 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 2500 դրամ
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման , վերականգնման , արդիականացման աշխատանքների / բացառության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի / համար , եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծով ՝
1/Չի նախատեսվում կցակառույցների , վերակառույցների , շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության- 1500դրամ
2/ Բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա , բացի սույն կետի 1 ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանցված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով
3/ Նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա , սույն օրենքի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանված նորմերը :
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար , տեղական տուրքը սահմանվում է - 2500 դրամ
4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է՝
1 / Ոգելից և ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար ՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար - 5000 դրամ
2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար ՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպում ՝ յուրաքան - չյուր եռամսյակի համար - 7000 դրամ
5. Համայնքի տարածքում
1/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 300 դրամ մեկ քմ. – ի համար
2/ Հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և / կամ / սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվութ- յան համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 150 000 դրամ
3/ Խանութներում ,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 30 000 դրամ
4/ Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի

մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 50 000 դրամ
5/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում – 6000դրամ
Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում – 1000 դրամ
6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները՝ ժամը 24. 00 - ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
1/ Առևտրի օբյեկտների համար - 25 000 դրամ
2/ Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար – 100 000 դրամ
3/ Բաղնիքների / սաունաների / համար - 200 000 դրամ
4/ Խաղատների կազմակերպման համար - 500 000 դրամ
5/ Շահումով խաղերի կազմակերպման համար - 450 000 դրամ
6/ Վիճակախաղերի կազմակերպման համար - 100 000դրամ
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրքը սահմանվում է՝
1/ Ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 1 000 դրամ
2/ Թունդ ալկահոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 2 500դրամ
3/ Այլ արտաքին գովազդի համար - 1000 դրամ
4/ Դատարկ գովազդային վահանակների համար - 700 դրամ
8. «Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ:
9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է – 3 000 դրամ
10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 10 000 դրամ
11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 5 000 դրամ
12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել – 3 000 դրամ

13.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար սահմանել - 3 000 դրամ

14. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճար սահմանել

1/ Յուրաքանչյուր բնակչի համար - 50 դրամ

2/ Սպասարկման կազմակերպությունների համար-400 դրամ

15 .Սույն որոշման 1 – ին , 2 – րդ , 3 – րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0 ,5 գործակցով :

Ավագանիներ՝ 1. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՐՓԵՆԻԿ

2. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

3. ԱԶԱՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ԳԱՐԻԿ

6. ԹԱՄԻՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԿՐՏԻՉ ԱԶԱՏՅԱՆ